ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՌԻՄՆԱ ՍՊԸ-Ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/04 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Տղամարդու գլխարկ (կեպի)՝ գլխարկանշանով (Ձև 2): Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ) և բաղկացած է թասակից և երկարացված գլխարկահովհարից: Երկու կողմից ունի երկուական օդանցք: Գլխարկի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշանը (նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան (Ձև 5)), որը նախապես (մինչև մատակարարումը) համաձայնեցվում է Գնորդի հետ: Աստառը պատրաստվում է բնական մետաքսից (8-C5-ВШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ), ներսի ժապավենը՝ բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ: Գլխարկի թասակի բարձրությունը 8-9 սմ է: Հետևի մասում առկա է գլխարկի թասակի չափսը փոխելու գոտի՝ կարգավորման սեղմակներով: Նախքան գլխարկների (կեպիների) պատրաստումը գլխարկների (կեպիների) գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Գլխարկների (կեպիների) ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև գլխարկների (կեպիների) կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի

	անվանումը, քանակը, չափսերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

РИМНА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/04 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	